«Աջակցություն Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը»

Ընդհանուր տեղեկատվություն

Ոլորտ՝	մարդու իրավունքներ
Տևողություն՝	4 տարի
Իրականացման ժամանակահատված՝	2016-2019
Ընդհանուր բյուջե՝	17մլն եվրո
Բյուջետային աջակցություն՝	15.7 մլն եվրո
Լրացուցիչ աջակցություն՝	1.3 մլն եվրո

Ծրագրի նկարագիր

Նպատակ՝ Աջակցել Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը

Հատուկ նպատակներ՝

Նպատակ I: Մարդու իրավունքների պաշտպանության բարելավում ազատ ընտրությունների իրավունքի, խոշտանգումների կանխարգելման, խտրականության դեմ (այդ թվում՝ փոքրամասնությունների, հաշմանդամություն ունեցող անձանց, փախստականների և այլ խոցելի խմբերի նկատմամբ) պայքարի, կանանց և տղամարդկանց իրավահավասարության և երեխաների պաշտպանության բնագավառներում համապատասխան օրենսդրության ներդրման և իրականացման միջոցով

Նպատակ II: Մարդու իրավունքների բնագավառում համակարգման ու համագործակցության բարելավում և համապատասխան շահագրգիռ կողմերի կարողությունների ընդլայնում:

Բարեփոխումների շրջանակ:

- Ընտրական համակարգի մոտարկում՝ Եվրոպայի խորհրդի (ԵԽ) և Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի առաջարկություններին համապատասխան,
- խոշտանգումների կանխարգելման բնագավառում առաջընթացի ապահովում իրավական, քննչական և իրավակիրառ ոլորտներում բարեփոխումների միջոցով
- փոքրամասնությունների պատկանող անձանց, հաշմանդամություն ունեցող անձանց, փախստականների և այլ խոցելի խմբերի առավել արդյունավետ պաշտպանություն խտրականությունից,

- կանանց և տղամարդկանց միջև իրավահավասարության ապահովման գործուն մեխանիզմներ և ընտանեկան/ սեռի հիմքով բռնության և շահագործման զոհերի պաշտպանություն,
- երեխաների պաշտպանության բարելավված համակարգ, այդ թվում՝ երեխաների խնամքի և պաշտպանության հաստատությունների բեռնաթափում (ապաինստիտուցիոնալացում),
- Մարդու իրավունքների պաշտպանության գործողությունների ծրագրի և մարդու իրավունքների միջազգային հանձնառությունների իրականացման ու տարեկան վերանայման հարցում Արդարադատության նախարարության համակարգման դերի ու կարողությունների արդյունավետության ապահովում, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողով ։